

Ահա նորէն «Հայթարմաճն»:

— Կովկասը, Կովկա՛սը, ոսոսստուն եւ կենսուրախ:

— Այո... Լա՛ւ...

Եւ նորէն ձեռքը օդին մէջ ծփուն, ի նշան գոհունակութեան:

Այս անգամ այնքան ոգեւորուած էր որ, երբ տիկինը ըմպելի հրամցուց այցելուներուն, ինքն ալ ուղեց խմել:

Ոտուակի խնծիղ մը դէմքին վրայ՝ կը խլրտէր, երկինքէն կայծակը յափշտակել կ'ուզէր, բառ մը, մէկ հատիկ բառ մը արտասանելու համար: Ապա տրտունջի շարժումէն մը, որով կ'աւաղէր թէ աջ ձեռքը չի գործեր:

Դուրսը հովը կը սուլէր, տերեւները կը սօսափէին, եւ մենք անձկութեամբ կը դիտէինք Տառապեալը, որ այս անգամ ալ նշանացի կը հասկցնէր թէ աջ աչքը չի տեսներ:

Ներկաներէն մէկը միւսին երեսը նայելու կը վախնար, արցունքը չմատնելու համար:

Ու նորէն հովը: Տերեւները: Ստուերները, որոնք այս անգամ Հայերէն կը խօսէին.

... Անտառի խորքում առանց ֆնարի մի լաբ է հեծծում:

Մարտէլլ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԳԵԱՆ



×

Իմ կընումսին երկինքը՝ ժամ, արեւը՝ չափ սրբապաշտ,
Ծիածանը մարօտ եղաւ, ամէնքի սէրն աւազան.

Սարը եղաւ կընփախարդս, ցօղը՝ միւռնն կենսաւէտ,
Ու կընփռըս Նա ինքն եղաւ, որ աստիճանաց ինձ պօէտ:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

×

Ձկայ աւելի մուկրակամ կապ մը քան եղբայրութեան կապը: Հայրը կը սիրէ իր տղան. մայրը կը սիրէ իր գաւակը. գաւակը կը սիրէ իր հայրն ու մայրը. բայց ի՞նչ կ'արժէ այս: Վայրի անասունն ալ կը սիրէ իր ձագը: Բայց կապուիլ հոգիի, ոչ թէ արիւնի խնամութեամբ, — անա ինչ որ միայն մարդը կրնայ ընել: (Կօկոլ):

×

Երբ ծերուկ պապս ուզեց մորէն ամուսնանալ, մտաւ, մտածեց ու մտածեց. — Եթէ պառաւ մը առնեմ, պիտի չուզէ մտիկ ընել ինձի: Եթէ երիտասարդուի մը առնեմ, պիտի չուզէ սիրել զիս. եթէ սիրէ, պիտի չուզէ համարել: Եւ եթէ համարել, անդին պիտի դառնայ քֆնելու համար (Ռուսական հին երգ):